

չկրնալով յաղթել հիւանդութեան՝ 1363-ի հոկտեմբերին մեռաւ եւ թաղուեցաւ նոյն քաղքին մէջ (1), հաղիւ ողջունած 24 գարուններ: Այսպէսով՝ դահակալութեան իրաւունքն անցաւ իր Լեւոն եղբօրը:

Պետրոս երբ խնացաւ Պիմունդի մեռնիլը, սկսաւ Լեւոնի վրայ մտածել. եւ երբ ներկայացաւ Ուրբանոսի, նկարագրեց Հայաստանի քրիստոնեաներուն ողբալի վիճակը, եւ բարեխօսեց Լեւոնի մասին, խնդրելով նա եւ նոր խաչակրութեան մը կազմութիւնը, որ անմիջապէս ուղղուեցաւ՝ ժրանսայի Յովհաննէս Բ թագաւորին ներկայութեանն ու խոստումովն իսկ, թէ եւ վերջէն չյաջողեցաւ այս խաչակրութիւնը, Յովհաննէսի մահը (1364) վրայ հասնելով (2): Իսկ Լեւոնի դահակալութեան նկատմամբ պատը Պետրոսին յանձնեց 3 ապրիլ 1365 թուակեր հետեւեալ թուղթը, ուղղուած Հայոց բարձրաստիճան եկեղեցականներուն եւ իշխաններուն: Ասկէ զատ՝ Լեւոնին յանձնուելու համար պապն ուրիշ թուղթ մըն ալ տուած է Պետրոսին, ինչպէս կը հաւաստէ Դարդել (եր. 58), բայց՝ հակառակ բոլոր ջանքերուն՝ այս վերջին թղթին օրինակը չկրցայ գտնել:

Թուղթ Ռոբանոսի Ե առ Հայս (3)

Պատուական Եղբարց Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց, եւ

(1) Դարդել, եր. 50. — բայց Դարդելի մեջ դրուած 1343 բուականը սխալ է. պէտք է կարդալ 1363, ինչպէս հիշեց կերպով իկր դեռ եր. 58: — Պիմունդի գերեզմանին տեղն անձամբ մնացած է մինչեւ հիմա, քեւտ շատ փնտրուած է Ալիբան:

(2) Դիւգէկլէն (*Chronique de Duguesclin*, գիրք 6, տղ 7465 եւ շար.) հետեւեալ տղերը կը նուիրէ խոստացուած այս նոր խաչակրութեան, որուն ինքն ալ պիտի մասնակցէր.

... Car Bertram au corps gent
Avait en son pourpoz et son essiant
Que d'aler en Grenade et encor plus avant
Car à Chypre cuydait aller en confortant
Le noble roy de Chipre, le hardi conquérant
Qui sur les Sarrasins alait fort guerroyant ...
S'avait li roi esté en France par deça
Au noble roi Jehan, qui bien li accorda
Qu'il irait outre-mer et li convenença ...

(3) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ *Document 1*.